Արարատբանկ ԲԲԸ ՄՓՄՁ-ների վարկային գիծ

Արարատ բանկի ՄՓՄՁ-ների ծրագիր

Երկիր	Հայաստան
Ծրագրի համարը	43698
Բիզնես ոլորտ	Բանկերի վարկավորում
Հանրային/մասնավոր	Մասնավոր
Բնապահպանական դաս	Ֆինանսական հաստատություններ
Խորհրդի նիստի ամսաթիվը	
Կարգավիճակ	Անցել է կոնցեպտուալ համապատասխանության քննությունը, սպասվում է վերջնական ուսումնասիրություն:
Ծրագրի ամփոփված փաստաթղթի հրապարակման ամսաթիվը	2012թ. մարտի 14

Պատասխանատու անձ

Մադինա Սակբաևա, ծրագրի պատասխանատու
sakbaevm@ebrd.com

Ծրագրի նկարագիրը

ՎԶԵԲ-ը քննում է հայաստանյան Արարատ բանկին վարկային գծի տրամադրման հնարավորությունը 7 մլն ԱՄՆ դոլարին համարժեք չափով, որը կուղղվի միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների (ՄՓՄՁ) վարկավորմանը և որից առնվազն 1 մլն ԱՄՆ դոլարը կհատկացվի փոքր և միջին ագրոբիզնեսներին: Վարկային գիծը կտրամադրվի ԱՄՆ դոլարով կամ ՀՀ դրամով՝ կախված Արարատ բանկի կարիքներից: Տեղական արժույթով վարկավորմանը կաջակցի Վաղ անցումային երկրների տեղական արժույթի՝ ռիսկերի նկատմամբ համատեղ պատասխանատվության ծրագիրը:

Ազդեցությունն անցումային շրջանի վրա

ՄՓՄՁ-ների ծրագրի միջոցով ՎԶԵԲ-ը կավելացնի Հայաստանի բանկային հատվածի վարկավորում տրամադրելու ընդհանուր կարողությունը: Անցումային շրջանի վրա ազդեցությունը կիրագործվի տեղական ՄՓՄՁ-ների համար հասանելի միջնաժամկետ ֆինանսավորման ուժեղացման միջոցով, ինչպես նաև բանկային հատվածում մրցակցությանն աջակցելու միջոցով: ՄՓՄՁ-ներին տրամադրվող ֆինանսավորման հասանելիությունը կաջակցի միկրո, փոքր և միջին բիզնեսների և ձեռներեցների համար վարկավորման շուկայի զարգացմանը և կնպաստի

զբաղվածության պահպանմանը, որը հավանաբար տուժել է ֆինանսական ճգնաժամի հետևանքով: Վարկային գծի տեղական արժույթով տրամադրումը կարող է օգուտ բերել Հայաստանի մարզերին. այն թույլ կտա մեծացնել վարկավորումը մայրաքաղաքից դուրս գտնվող Արարատբանկի մասնաճյուղերի ընդլայնված ցանցի միջոցով և սկսել վարկավորում տրամադրել գյուղատնտեսական հատվածին (որը բանկի համար նոր հատված է):

Հաճախորդը

Արարատբանկ բաց բաժնետիրական ընկերությունը մասնավոր առևտրային բանկ է, որը գործում է Հայաստանում: Բանկը տրամադրում է բազմապիսի բանկային ծառայություններ կորպորատիվ, ՄՓՄՁ և մանրածախ հաճախորդներին: Արարատբանկն իր գործունեությունը ծավալում է իր հիմնական հաճախորդների՝ միկրո, փոքր և միջին ընկերությունների ուղղությամբ, իսկ անհատները կազմում են հաճախորդների երկրորդ ամենամեծ խումբը:

ՎԶԵԲ-ի տրամադրած ֆինանսավորումը

7 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՄՓՄՁ-ների վարկավորման գիծ, որից առնվազն 1 մլն ԱՄՆ դոլարը հատկացվելու է ՄՓՁ-ներին՝ ագրոբիզնեսը վարկավորելու համար:

Ծրագրի գումարը

7 մլն ԱՄՆ դոլարի համարժեքը հայկական դրամով կամ ԱՄՆ դոլարով:

Բնապահպանական ազդեցություն

Ֆինանսական հաստատությունների դասին պատկանող Արարատբանկն ընդունել և կիրառում է բնապահպանական և սոցիալական պահանջներին համապատասխանության ստուգման և մոնիթորինգի ընթացակարգերը և բավարարում է Բանկի՝ Բնապահպանական ազդեցության սոցիալական, բացառման ու ստանդարտացման պահանջներին: Արարատբանկի քաղաքականությունները և ընթացակարգերն ընդհանուր առմամբ համապատասխանում են ՎԶԵԲ-ի՝ Կատարողականի վերաբերյալ 2-րդ և 9-րդ պահանջներին: Լրացուցիչ բարելավման վերաբերյալ գործողությունների ծրագրում ձևակերպվել են որոշ առաջարկություններ, որոնք համաձայնեցվել են Արարատբանկի հետ:

Տեխնիկական աջակցություն

Նախկինում ցուցաբերված տեխնիկական աջակցությունը ներառում էր Ինստիտուցիոնալ կառուցման ծրագիր, որը որը զուգորդեց Բանկի՝ հաստատության կապիտալում ներդրումներին: Տեխնիկական աջակցության նպատակն էր՝ օգնել բանկին մշակել իր քաղաքականությունները և ընթացակարգերը , պլանավորել իր ռազմավարությունը, անցկացնել տեղեկատվական տեխնոլոգիաների քննություն և մշակել գործառնությունների բարելավմանն ուղղված առաջարկություններ, և, ի թիվս այլ նպատակների, օժանդակություն ցուցաբերել մարկետինգային ռազմավարության մշակման գործում: Դոնորական ֆինանսավորումը տրամադրվել էր ՎԶԵԲ-ի՝ Վաղ

անցումային երկրների հիմնադրամի և ՎԶԵԲ-ի Բաժնետերերի հատուկ հիմնադրամի կողմից:

Բացի այդ, Արարատբանկին տրամադրվել է տեխնիկական աջակցություն Հայաստանի՝ Միկրովարկավորման ծրագրի ներքո: Աջակցությունը մշակվել էր՝ ծրագրի ինստիտուցիոնալ հզորացման միջոցով ապահովելու վարկավորման ընդլայնված հնարավորություններ ՄՓՄԶ-ների համար և ստեղծելու կատարելագործված հմտություններ և ավելի հարուստ գիտելիքներ բանկային ոլորտում: Դոնորական ֆինանսավորումը տրամադրվել էր ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՎԶԵԲ-ի՝ Վաղ անցումային երկրների հիմնադրամի և ՎԶԵԲ-ի Բաժնետերերի հատուկ հիմնադրամի կողմից:

Պլանավորվում է, որ նոր ծրագիրը կզուգորդվի տեխնիկական աջակցությամբ, որը կմշակվի բանկի կողմից ագրոբիզնեսի վարկավորումը զարգացնելու նպատակով: Այն միտված է նպաստելու գյուղատնտեսական և գյուղական ոլորտների կայուն վարկավորմանը, որը կհամադրվի կարողությունների ստեղծման հետ: Ակնկալվում է դոնորական ֆինանսավորում ստանալ Եվրամիության Հարևանության ներդրումային ծրագրից՝ «Ինստիտուցիոնալ զարգացման և ճգնաժամին նպատակային արձագանքման տեխնիկական աջակցության շրջանակային հենքի» ինստիտուցիոնալ զարգացման բաղադրիչի միջոցով:

Ընկերության ներկայացուցիչ

Պարոն Դավիթ Հարությունյան, գործադիր տնօրենի տեղակալ, Արարատբանկ ԲԲԸ, Հայաստանի Հանրապետություն, Երևան, Պուշկինի փող., 19 շենք:

Հեռախոս. +374 10 547962

Ֆաքս. +374 10 547894

Էլ-փոստ. araratbank@araratbank.am

Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների վերաբերյալ տեղեկատվության համար խնդրում ենք դիմել հաճախորդ ընկերությանը:

Ընդհանուր տեղեկատվություն

Գնումներին չառնչվող տեղեկատվություն ՎԶԵԲ-ի ծրագրերի մասին.

Հեռ.՝ +44 20 7338 7168; Ֆաքս՝ +44 20 7338 7380

Էլ.փոստ՝ projectenquiries@ebrd.com

Հանրային տեղեկատվական քաղաքականություն

Հանրային տեղեկատվական քաղաքականությունը ի ցույց է դնում, թե ինչպես է ՎԶԵԲ-ը ներկայացնում տեղեկատվությունը և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի ավելի բարձրացնի իր ռազմավարության, քաղաքականության և գործունեության վերաբերյալ իրազեկումը:

Հանրային տեղեկատվական քաղաքականության տեքստին ծանոթանալու համար այցելեք Text of the PIP

Ծրագրերի վերաբերյալ Բողոքարկման Մեխանիզմ (ԾԲՄ)

ՎԶԵԲ-ը հիմնել է Ծրագրերի վերաբերյալ Բողոքարկման Մեխանիզմը (ԾԲՄ), որպեսզի այն Բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի առկա կամ հնարավոր վնասակարության մասին անհատներից կամ կազմակերպություններից ստացած բողոքների անկախ ուսումնասիրություն անցկացնի: ԾԲՄ-ին վերաբերող ընթացակարգի օրենքներին կարող եք ծանոթանալ www.ebrd.com/downloads/integrity/pcmrules.pdf, իսկ դրա ռուսերեն տարբերակին՝ http://www.ebrd.com/downloads/integrity/pcmrulesr.pdf

ԾԲՄ-ի ներքո բողոքները պետք է ներկայացվեն ՎԶԵԲ-ի ֆինանսավորման վերջին տրանշից ոչ ուշ քան 12 ամսվա ընթացքում: Կարող եք կապվել ԾԲՄ-ի գործակալի (pcm@ebrd.com) կամ ՎԶԵԲ-ի համապատասխան գրասենյակի հետ, եթե վստահ չեք, թե ինչ ժամանակահատվածում պետք է ներկայացնեք բողոքը:

Ծրագրի ամփոփ փաստաթղթերը ստեղծվում են նախքան ՎԶԵԲ-ի Տնօրենների Խորհրդի կողմից կատարվելիք ուսումնասիրությունը: Ծրագրի մանրամասները կարող են փոփոխվել Ծրագրի ամփոփ փաստաթղթի հրապարակումից հետո: Չի կարելի համարել, որ Ծրագրի ամփոփ փաստաթղթերը ներկայացնում են ՎԶԵԲ-ի պաշտոնական քաղաքականությունը:

Վերջին անգամ թարմացվել է 2012թ. մարտի 14-ին: